



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 01/22**

07.01.2022թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-ին մասերի և 422-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 416-րդ հոդվածի 1-5.1-ին մասերի և 422-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 50-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի, 75-րդ և 78-րդ հոդվածներին այնքանով, որքանով իրավական ակտով չի սահմանվել տուգանքների նշանակման ճկուն մեխանիզմ, ինչն էլ հանգեցնում է տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման իրավունքի նկատմամբ անհամաչափ միջամտության:

2018 թվականից Դիմողին հասցեագրվել են բողոքներ փոքր ու միջին ձեռնարկատիրությամբ զբաղվող անձանցից, որոնք բարձրացնում են հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները խախտելու համար սահմանված տուգանքների միասնական չափերի արդյունքում իրենց կողմից տնտեսական գործունեությամբ զբաղվելու ոչ համաչափ սահմանափակման հարցը: Մասնավորապես, բողոքների հիմնական մասը վերաբերում է նրան, որ տուգանելիս հաշվի չեն առնվում կոնկրետ իրավախախտման հանգամանքները և չափերը՝ այդպիսով նշանակվող տուգանքները չեն անհատականացվում, ինչի արդյունքում տնտեսվարողը հայտնվում է ծանր իրավիճակում, ընդհուպ մինչև գործունեությունը դադարեցնելու սպառնալիքի առջև:

Օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի իրավակարգավորման համալիր վերլուծությունից պարզ է դառնում, որ Օրենսգրքում ամրագրված են հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու դեպքում տուգանքների հստակ չափեր:

Ինչ վերաբերում է Հարկային օրենսգրքի 422-րդ հոդվածին, ապա ըստ Դիմողի՝ պետք է հստակորեն փաստել, որ ըստ կարգավորման՝ չօգտագործված (այդ թվում՝ կորած) կամ վնասված

ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձն Օրենսգրքով սահմանված ժամկետներից ուշացնելու կամ Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու դեպքում հաշվարկվում են չափազանց բարձր տուգանքներ:

Նշվածը ևս մեկ անգամ փաստում է դիմումով ներկայացված այն դիրքորոշումը, որ ՀՀ հարկային օրենսգրքի խնդրո առարկա կարգավորումների արդյունքում իրականացվող ստուգումները և դրանց արդյունքում նշանակվող տուգանքները փաստացի իրականացնում են պատժիչ գործառույթ՝ հանգեցնելով իրավունքի անհամաչափ միջամտության:

Ավելին, հարկային իրավախախտումների համար սահմանված տուգանքների անհամաչափության հարցը չի սահմանափակվում միայն քննարկվող նորմերով, ավելին՝ այն վերաբերում է ողջ ՀՀ հարկային օրենսգրքին, ինչն արտացոլվում է ոչ միայն նորմերի տեսական մեկնաբանման և վերլուծության, այլ դրանց գործնական կիրառման արդյունքում, ինչի մասին փաստում են տնտեսվարող սուբյեկտների՝ Օրենսգրքով սահմանված տուգանքների անհամաչափության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվող բողոքները:

Տնտեսական գործունեության ազատության սկզբունքը ազատ քաղաքացիական հասարակության կայուն գոյության նախադրյալ է, մարդու ազատության տնտեսական հիմքը: Տնտեսական գործունեության ազատությունը նշանակում է իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքը օրենքով չարգելված տնտեսական գործունեության համար, այսինքն՝ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Սահմանադրականության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ տնտեսական հարաբերությունները կարգավորող սահմանադրական հիմնարար սկզբունքներն իրագործելի են միայն երկրում ժողովրդավարական ազատությունների և դրանց հուսալի իրավական պաշտպանվածության պարագայում, ինչպես նաև՝ տնտեսական գործունեության արդյունավետությունն այդ իսկ գործունեության սոցիալական հետևանքների հետ խելամիտ զուգորդելու պայմաններում:

Դիմողը նշում է, որ սույն դիմումի համար հիմք հանդիսացած դիմումների քննությունը ցույց է տալիս, որ օրենսդրական միատեսակ կարգավորումների պարագայում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տարբեր կազմակերպությունների համար իրավունքի միջամտությունը և տուգանքի չափը տարբեր ազդեցություն է ունենում: Տուգանքներ կիրառելիս կոնկրետ իրավախախտումների հարցում չի ցուցաբերվում անհատական մոտեցում, ինչի արդյունքում էլ առաջացել են տնտեսվարող սուբյեկտներին անհամաչափ տուգանելու դեպքեր: Փաստորեն օրենսդրական կարգավորումները մի շարք դեպքերում իրավակիրառողի կողմից ոչ համաչափ պատասխանատվության միջոցի կիրառման պատճառ են:

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 416-րդ հոդվածի 1-5.1-ին մասերի և 422-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 50-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի, 75-րդ և 78-րդ հոդվածներին այնքանով, որքանով իրավական ակտով չի սահմանվել տուգանքների նշանակման ճկուն մեխանիզմ, ինչն էլ հանգեցնում է տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման իրավունքի նկատմամբ անհամաչափ միջամտության:

Վիճարկվող նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1 մասերի համաձայն՝

*1. Օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելու պահին և վայրում կամ շրջիկ առևտրի կետում հարկային մարմնում այդ վայրի հասցեով կամ շրջիկ առևտրի կետի համար գրանցված՝ տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում այդ վայրի հասցեով կամ շրջիկ առևտրի կետի համար տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենա գրանցված չլինելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝*

*1) 300 հազար դրամի չափով, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի.*

*2) մեկ միլիոն դրամի չափով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով:*

*2. Հարկային մարմնի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝*

*1) 600 հազար դրամի չափով, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ շրջիկ առևտրի կետում և այդ մասով կասեցվում է մինչև սահմանված կարգով այդ վայրի հասցեով կամ շրջիկ առևտրի կետի համար գործունեության այդ մասով հարկային մարմնում գրանցված հսկիչ դրամարկղային մեքենայի ապահովումը.*

*2) երկու միլիոն դրամի չափով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով, և նրա գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է մինչև սահմանված կարգով այդ վայրի հասցեով գործունեության այդ մասով հարկային մարմնում գրանցված հսկիչ դրամարկղային մեքենայի ապահովումը:*

3. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասում նշված դեպքի) խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝

1) 150 հազար դրամի չափով, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի.

2) 600 հազար դրամի չափով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով:

4. Հարկային մարմնի կողմից սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝

1) տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ շրջիկ առևտրի կետում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 300 հազար դրամից, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է հինգ օրով.

2) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ տվյալ գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս մեկ միլիոն դրամից, և նրա գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է հինգ օրով:

5. Հարկային մարմնի կողմից սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտումը երկրորդ և ավելի անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝

1) տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ շրջիկ առևտրի կետում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 600 հազար դրամից, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է տասը օրով.

2) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ տվյալ գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ

պակաս 2 միլիոն դրամից, և նրա գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է տասը օրով:

5.1. ՀԴՄ-ի ծրագիրն արտաքին (առևտրային) ծրագրերի հետ ինտեգրած լինելու դեպքում կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից այդ ծրագրերի և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենայի ծրագրի միջամտության արդյունքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնում տպագրված կամ փաստացի վաճառված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության անվանման, ապրանքային դիրքի, աշխատանքի կամ ծառայության կոդի, քանակի և (կամ) ծավալի վերաբերյալ տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն հարկային մարմին ուղարկելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում են հինգ միլիոն դրամի չափով:

Օրենսգրքի 422-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Չօգտագործված կամ վնասված (բացառությամբ խոտանված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների) ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը Օրենսգրքի 396-րդ հոդվածի՝ համապատասխանաբար 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետներից ուշացնելու կամ Օրենսգրքի 396-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու կամ կորստի դեպքում հաշվարկվում է տուգանք՝

1) նախորդ հարկային տարվա ընթացքում ստացված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների թվաքանակի մինչև մեկ տոկոսի (ներառյալ) չափով ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու կամ հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու կամ դրանց կորստի դեպքում՝ յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի համար՝ 50 դրամ:

2) նախորդ հարկային տարվա ընթացքում ստացված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների թվաքանակի 1-ից մինչև 10 տոկոսի (ներառյալ) չափով ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու կամ հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու կամ դրանց կորստի դեպքում՝ յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի համար՝ 100 դրամ:

3) նախորդ հարկային տարվա ընթացքում ստացված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների թվաքանակի 10-ից մինչև 50 տոկոսի (ներառյալ) չափով ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու կամ հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու կամ դրանց կորստի դեպքում՝ յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի համար՝ 300 դրամ:

4) նախորդ հարկային տարվա ընթացքում ստացված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների թվաքանակի 50 տոկոսից ավելի չափով ակցիզային դրոշմանիշերի և (կամ)

դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու կամ հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու կամ դրանց կորստի դեպքում՝ յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի համար՝ 500 դրամ:

Սահմանադրության 50-րդ հոդված 3-րդ մասի համաձայն՝

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Այսպես, սահմանադրական դիմումի ներկայացման հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Օրենսգրքով սահմանված չէ տուգանքների նշանակման ճկուն մեխանիզմ, ինչն հանգեցնում է տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման իրավունքի նկատմամբ անհամաչափ միջամտության:

Օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի իրավակարգավորման ուսումնասիրությունը ցույցը է տալիս, որ դրանցով ամրագրված են հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու դեպքում տուգանքների բավականին մեծ և հստակ չափեր: Իր հերթին, Օրենսգրքի 422-րդ հոդվածը նախատեսում է չափազանց բարձր տուգանքներ չօգտագործված (այդ թվում՝ կորած) կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձն Օրենսգրքով սահմանված ժամկետներից ուշացնելու կամ Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու դեպքում:

Քանի որ պատշաճ վարչարարության (Սահմանադրության 50-րդ հոդված) և տնտեսական գործունեությամբ զբաղվելու (Սահմանադրության 59-րդ հոդված) իրավունքները սահմանադրորեն երաշխավորված իրավունքներ են, ուստի դրանց սահմանափակմանն անհրաժեշտ է անդրադառնալ Սահմանադրության 78-րդ հոդվածի տեսանկյունից (համաչափության սկզբունք):

Համաչափության սկզբունքի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007 թվականի փետրվարի 7-ի ՄԴՈ-677 որոշման մեջ արձանագրել է. «...Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

2001 թվականի հունվարի 11-ի ՄԴՈ-278 որոշման մեջ արձանագրվել է հետևյալ դիրքորոշումը. «6. .... Տվյալ դեպքում, նման սահմանափակում նախատեսող օրենքներում պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները. ա) հարաբերությունների սահմանման և կարգավորման առումով օրենքը պետք է լինի առավելապես ընդհանուր և վերացական, քան կոնկրետ հասցեագրված, բ) նախատեսվող սահմանափակումները պետք է լինեն համաչափ և բխեն ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության ժողովրդավարական սկզբունքների էությունից, գ) սահմանափակումները չպետք է լինեն այնպիսին, որոնք վտանգեն մարդու իրավունքների հիմնական բովանդակությունը»:

Անդրադառնալով նաև իրավունքների սահմանափակման համաչափությանը՝ 2015 թվականի դեկտեմբերի 8-ի ՄԴՈ-1244 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է «... Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին»:

Իր որոշումներով Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև պատասխանատվության միջոցներին և դրանց համաչափությանը: Այսպես, Սահմանադրական դատարանը ՄԴՈ-924 որոշման մեջ նշել է, որ իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի

ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից և այլ էական հանգամանքներից:

Մինևույն ժամանակ, 2013 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ՍԴՈ-1130 որոշմամբ՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ կախված զանցանքի բնույթից և լրջությունից, այսինքն՝ զանցանքի առանձնահատկություններից, ոչ բոլոր դեպքերում է, որ անհրաժեշտություն է առաջանում սահմանել տվյալ զանցանքի համար նախատեսված պատժաչափի ստորին և վերին սահմանները: Տվյալ դեպքում առանձնակի կարևորություն է ստանում այդպիսի զանցանքների համար պատժաչափի համաչափության սկզբունքի պահպանումը: Դատարանը, մասնավորապես, նշել է, որ «...կախված զանցանքի բնույթից և լրջությունից, այսինքն՝ զանցանքի առանձնահատկություններից՝ ոչ բոլոր դեպքերում է, որ անհրաժեշտություն է առաջանում սահմանելու տվյալ զանցանքի համար նախատեսված պատժաչափի ստորին և վերին սահմանները՝ չբացառելով նշված դեպքերում այդպիսիք սահմանելու՝ օրենսդիր մարմնի բացառիկ հայեցողական իրավասությունը: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ զանցանքի բնույթը միանշանակ է ու պայմանավորված է կոնկրետ փաստով և ոչ որևէ այլ հանգամանքով:»:

Այսինքն՝ վերոգրյալից բխում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն նպատակին հասնելու համար, իսկ նշանակված տուգանքները՝ համաչափ կատարված զանցանքին:

Նշված սկզբունքը կոչված է երաշխավորելու, որպեսզի այս կամ այն հանգամանքներում պետության անունից հանդես եկող վարչական մարմինը համարժեքություն ապահովի իր կողմից կիրառվող միջոցների ու դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակի միջև:

Սակայն վիճարկվող նորմերի վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ Օրենսգրքում բացակայում է հարկային տուգանքների անհատականացման մեխանիզմը: Տուգանքներ նշանակելիս հաշվի չեն առնվում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտի շրջանառության ծավալը, մեղքը, մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները, կատարված իրավախախտման վտանգավորության աստիճանը: Արդյունքում, որոշ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ նշանակված բավականին մեծ տուգանքները հանգեցնում են ընդհուպ մինչև վերջիններիս ձեռնարկատիրական գործունեության դադարեցման: Ստացվում է, որ նշանակված տուգանքը՝ որպես պետական միջամտության ձև, նպատակին չի ծառայում: Գործող կարգավորումների արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ հարկային մարմնի տուգանքները չեն ապահովում հետապնդվող նպատակի հետ համաչափություն և կապ, անհատական մոտեցման բացակայության արդյունքում տնտեսավարողների մի մասը՝ շրջանառության մեծ ծավալներ ունեցող տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն են ունենում շարունակել իրենց ձեռնարկատիրական



գործունեությունը, իսկ մյուս՝ ավելի փոքր շրջանառություն ունեցող կամ սկսնակ տնտեսավարողները՝ ոչ:

Օրենսգրքի 416-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրն առաջին անգամ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության խախտման դեպքում սահմանում է տուգանքի հստակ բարձր չափ՝ առանց հաշվի առնելու իրավախախտման հանգամանքները և իրավախախտ սուբյեկտի շրջանառության ծավալը, իսկ խախտումը կրկնելու դեպքում, թեև հաշվի է առնվում տնտեսավարող սուբյեկտի շրջանառության ծավալը, սակայն կրկին սահմանվում է հստակ 0,7 տոկոսի չափը, ավելին՝ հարկային մարմնին հնարավորություն է տրվում սահմանել շրջանառության 0.7 տոկոսից ավելի բարձր տուգանք՝ նախատեսելով տուգանքի գումարի մինիմալ նվազագույն չափ, որը տվյալ տնտեսավարողի շրջանառության 0.7 տոկոսից բարձր է ստացվում: Նշվածով ևս մեկ անգամ հաստատվում է, որ սահմանված տուգանքների չափերը միասնական են ոչ հավասար իրավիճակների նկատմամբ և անհամաչափ են: Բացակայում են օրենսդրական այնպիսի կարգավորումներ, որոնք պատասխանատվության ենթարկող իրավասու մարմնին հնարավորություն կընձեռեն որոշել նշանակվող պատասխանատվության կոնկրետ չափը՝ իրավախախտման բոլոր հանգամանքների հաշվառմամբ:

Իր հերթին Սահմանադրության 50-րդ հոդվածն ամրագրում է պատշաճ վարչարարության իրավունքը: Մասնավորապես՝ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Իսկ նշված հոդվածի 3-րդ մասով սահմանվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձանց պարտավորությունը՝ մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Մինևույն ժամանակ, Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Այսինքն՝ միայն իրավունքի ճանաչումը և ամրագրումը բավարար չեն իրավունքի իրացումն ապահովելու համար, անհրաժեշտ է նաև, որպեսզի նախատեսվեն գործուն մեխանիզմներ: Ըստ այդմ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով սահմանված է վարչական մարմնի պարտավորությունը՝ վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների մասին լսելու վերաբերյալ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում անձի լսված լինելու իրավունքն ամրագրված է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով:

Մակայն, Օրենսգրքով հստակ տուգանքների չափերի սահմանված լինելու պարագայում, ստացվում է, որ անձի՝ լաված լինելն ունի ձևական բնույթ, քանի որ նույնիսկ այն պարագայում, երբ ապահովվում է անձի այդ իրավունքը, նրան հնարավորություն է ընձեռվում ներկայացնել բացատրություններ, ներկայացնել գործի հանգամանքները՝ իր համար բարենպաստ հանգամանքների մասով, մինևույն է՝ վարչական մարմինը, սահմանափակված լինելով Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջով, իրավունք չունի շրջանցելու Օրենսգրքի՝ հստակ տուգանքների չափեր նախատեսող դրույթները:

Վերոգրյալից հանգում ենք այն եզրակացության, որ նախ՝ անձի՝ վարչական վարույթի ընթացքում լաված լինելու իրավունքը գործող կարավորումների պարագայում կրում է ձևական բնույթ, քանի որ անկախ նրա լաված լինելու իրավունքի ապահովվման պահանջի կատարման, մինևույն է՝ Օրենսգրքով սահմանված են տուգանքի գումարի հստակ չափեր, որոնցից տարբերվող տուգանք նշանակելու իրավասություն վարչական մարմինը չունի, երկրորդ՝ անհամաչափ մոտեցում է դրսևորված շրջանառության տարբեր ծավալներ ունեցող տնտեսավարողների նկատմամբ, ավելին՝ Օրենսգրքով սահմանված չեն անհատական մոտեցման մեխանիզմներ,

1. որոնք վարչական մարմին հնարավորություն կտան վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունն իրականացնել առավել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ,

2. որի պարագայում վարչական վարույթի արդյունքում նշանակված պատժի միջոցը կկրի կանխարգելիչ բնույթ, չի խոչընդոտի սահմանադրորեն երաշխավորված տնտեսական գործունեությամբ, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը,


3. կատարված զանցանքի և նշանակված պատժի միջև կլինի իրավաչափ կապ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանգում ենք այն եզրակացության, որ գործող կարգավորումները չեն բխում ինչպես համաչափության սկզբունքից, այնպես էլ պատշաճ վարչարարության և տնտեսական գործունեությամբ զբաղվելու՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքներից: Իրեն իրավական հոչակած պետությունը պետք է օրենսդրական մակարդակով սահմանի այնպիսի հստակ մեխանիզմներ,

- որոնք հնարավորություն կտան յուրաքանչյուր զանցանք քննել բազմակողմանի,
- որպեսզի անձի լաված լինելու իրավունքը ծառայի իր նպատակին,
- տուգանքի գումարի չափը որոշելիս հաշվի առնվի կատարված զանցանքի վտանգավորության աստիճանը, ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, անձի մեղքը,
- որպեսզի նշանակված տուգանքը համաչափ լինի կատարված իրավախախտմանը և հասնի իր նպատակին, ունենա կանխարգելիչ բնույթ:

**Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.**

- ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-ին մասերի և 422-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 50-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի, 75-րդ և 78-րդ հոդվածներին այնքանով, որքանով իրավական ակտով չի սահմանվել տուգանքների նշանակման ճկուն մեխանիզմ, ինչն էլ հանգեցնում է տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման իրավունքի նկատմամբ անհամաչափ միջամտության, խնդրահարույց է:

 Recoverable Signature

*Համակարգող՝*

**X** Lyudvik Davtyan

*Լյուդվիկ Դավթյան*

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169